



ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՈՒՂԻՈՎ՝ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԷՆ ԱՐԺԱՆԱԴԱՏԻ ԱՊԱԳԱՅ



Վերահաստատելով, որ ոչ ոք մոռցուած է եւ ոչինչ մոռցուած է, Յնչակեան Զսան հերոսներու նահատակութեան 111-րդ տարելիցին առթիւ, Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան, Սին էլ Ֆիլի քաղաքապետարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Յնչակեան նահատակներուն յիշատակի ոգեկոչման հանդիսութիւն, որուն ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Շահէ արք.



առթիւ յարգանքի տուրք մատուցել հնչակեան բոլոր ծանօթ եւ անծանօթ նահատակներուն, որովհետեւ հայրենիքին, ժողովուրդին եւ գաղափարին համար կեանքի զոհաբերութիւնը կը համարուի գերագոյն արժէք: «Այսօր նաեւ ուխտի



անդրադարձաւ Լիբանանի մերօրեայ զարգացումներուն ու վերահաստատեց Յնչակեան կուսակցութեան յանձնառութիւնը արժանապատիւ խաղաղութեան, զօրակցելով Լիբանանի պետութեան եւ օրինակեան գիտնած ուժերուն, հեռու արտաքին միջամտութիւններէն: Իր խօսքը ուղղելով երիտասարդներուն, ընկ. Տազետեան կոչ ուղղեց յանձնառու մնալու նահատակներուն արժէքներուն:



Փանոսեան, ՄԱՅԱԵՄ Կեդրոնական մարմինի ատենապետ վեր. Զրայր Չոլաքեան, գերազ. Տ. Ստեփանոս ծ. վրդ. Փաշայեան, Պէյրութի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սարմէ Պաղտասարեան ու դեսպանութեան անձնակազմը, ՀՀԴ Բիւրոյի անդամ, պետական երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ ՌԱԿ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ տղոք. Աւետիս Տազետեան, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան եւ ՌԱԿ Շրջանային վարչութեան անդամ տղոք. Սահակ Թաշճեան, Պուրճ Յամուտի քաղաքապետի ներկայացուցիչ Ըրոճ Գրիգորեան, Պէյրութի Զաղաքապետական խորհուրդի անդամներ մեթր Սերժ Մելքոնեան եւ Յովհաննէս Պաշճեան, Սին էլ Ֆիլի քաղաքապետական խորհուրդի անդամ Գարօյին Խաչիկեան, Ազգային վարչութեան ներկայացուցիչ Լիզա Պարսաճեան, ինչպէս նաեւ լիբանանահայ ազգային, մարզական, կրթական, բարեգործական, քաղաքապետական, մշակութային եւ լրատուական կառույցներու ատենապետներ ու ներկայացուցիչներ, հիւրեր եւ բազմաթիւ լիբանանահայեր:



Նորոգման օր է, երբ կը վերանորոգենք մեր հաւատարմութիւնը այն արժէքներուն եւ իտեալներուն, որոնց համար պայքարեցան եւ նահատակուեցան մեր նախնիները: Ի սկզբանէ, Յնչակեան կուսակցութեան նպատակը եւ առաքելութիւնը եղած է ազատագրուած տեսնել Հայաստանը, ինչպէս նաեւ ազատ ու արժանապատիւ կեանքով ապրող բոլոր ժողովուրդներն ու ընկճեալ դասակարգերը», յիշեցուց ընկ. Տաղեան, դիտել տալով, որ ջոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն ներկայութեամբ հանդիսութիւնը վերածուած է նահատակներուն պատգամով ոգեշնչուելու եւ համախմբուելու հնարաւորութեան:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկաւ ջութակահար Սագօ Աւագեան, երգեհոնի վրայ ընկերակցութեամբ Զարեհ Գալանճեանի, մինչ ընկ. Թաֆրանեան ներկայացուց ազգային քակի մը երգ:



ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Զեօշկերեան իր խօսքին մէջ շեշտը դրաւ ազգային ազատագրական եւ ընկերակցական պայքարին մէջ ՄԴՀԿ-ի աւանդին վրայ, վստահեցնելով որ կուսակցութիւնը յանդուգն պայքարող էր ու կը մնայ երէկ, այսօր եւ ընդմիշտ: Ան ապա անդրադարձաւ Հայաստանի նորագոյն զարգացումներուն, վերահաստատելով միասնականութիւնը պահպանող եւ պետութիւնը ամրացնող լուծումներու յանգելու Յնչակեան կողմ:



Խմբավարութեամբ ընկ. Յովհի Թաֆրանեանի, Նորակազմ «Կայծ» երգչախումբը հանդիսութեան բացումը կատարեց Լիբանանի, Հայաստանի եւ ՄԴՀԿ-ի քայլերդներով, ապա ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի անդամ ընկ. Գերոզ Տաղեան ողջունեց ներկաները եւ դիտել տուաւ, որ այս տարի որոշուած է ոգեկոչել ոչ միայն Զսանները, այլեւ ասոնց նահատակութեան 111-րդ տարելիցին



ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազետեան իր խօսքին մէջ «ազգային արժանապատուութեան տիտաններ» համարեց հնչակեան նահատակները, յիշեցնելով որ կուսակցութեան պատմութեան էջերը հարուստ են պայքարի ոսկէ դրուակներով: Ան ապա



Հուսկ, Առաջնորդ Սրբազանը ներկաներուն փոխանցեց իր սրտի խօսքը, որուն մէջ նշեց, թէ ուրախ եւ տխուր ամիթներով միշտ մեր նահատակները մեծարելով կը վերյիշենք, որ պայքարի ուղիին վրայ ունեցած ենք բազում հերոսներ, որոնք պահպանած են հայութեան իտեալները եւ Նոյնիսկ կեանքի գնով մարտնչած են յանուն հայ ժողովուրդի իրաւունքներուն: «Հայոց պատմութեան կրակը պետք է ամեն օր բոցավառէ մեր կեանքը, որպէսզի մեր տուններէն ներս,



ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ ԸՆԿ. ԱԼԵՔՍԱՆ ՔԵՕՇԿԵՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Յարգելի ներկայացուցիչներ, Սիրելի ընկերակիցներ և ընկերներ, Կրկին Յունիս է, եւ ամենամեծ մեր ժամանակակից կրկնողունի լիբանանահայության հետ հանդիպելու, մեր միտքերը փոխանցելու, մեր համայնքին հաշի տալու եւ անոր դատին ներկայանալու համար:



Յնչակեան կուսակցութիւնը մեր ազգային-ազատագրական պայքարի պատմութեան եւ Միջին Արեւելքի ծախ ընկերակրական շարժման անքակտելի մէկ մասնիկն է:

Այս իր նահատակներու գերագոյն նուիրումով եւ գործիչներու քրտինքով ձեռք բերած բոլոր յաջողութիւնները նուիրած է հայութեան եւ Հայաստանին, ինչպէս նաեւ Սփիւռքի հիւրընկալ երկիրներու ժողովուրդներուն՝ առանց դասակարգային, ազգային կամ ցեղային խտրականութեան:

Իսկ այդ նուաճումներուն եւ յաջողութիւններուն ի խնդիր տարուած պայքարի ճանապարհին ստացած հարուածներն ու վերքերը կրած է որպէս փառքի շքանշաններ, որոնք կը զարդարեն Մայր կուսակցութեան՝ նահատակներու արեամբ սրբագործուած կարմիր յեղափոխական դրօշը:

Յնչակեան կուսակցութիւնը, հաւատարիմ իր Մայր կուսակցութեան կոչումին եւ իբրեւ ազգային-ազատագրական պայքարի անդրանիկ շարժում, իր յանգումութեան գիւղ վճարած է կուսակցութեան ամենապայծառ դէմքերուն նահատակութեամբ: Այնուհանդերձ, չէ նահանջած, չէ յուսալքուած, դասակից չէ եղած: Ահաւաստանք խորքերը, թիֆլիս, Եկաճ, Կան, Սասուն, Չէյթուն, Զաճըն, Ատանա, Մուսայ լեռ, Երեւան, Ալեքսանդրապոլ, Սարգարապատ, Պաղեստին, Սուրիա, Լիբանան, Իրան, Յունաստան, Ֆրանսա, Միացեալ Նահանգներ, Արժանքին, Ուրուկուայ եւ հերոսական Արցախ:

Յարգելի ներկայացուցիչներ, Սիրելի ընկերակիցներ և ընկերներ,

19-րդ դարու վերջաւորութեան, պատմական ճակատագրական պահուն, Յնչակեան կուսակցութիւնը իր մէջ գտաւ ժողովուրդը առաջնորդելու գիտակցութիւնը, ուժն ու վճռականութիւնը, ընդունեց մարտահրաւերը եւ, բռնութեան ժանտ շրջանները փշոթելու նպատակով, երկար սպասուած կարմիր հրաւերին կոչուելու հնչեցուց ծագե մինչեւ ծագ: Ժընեւէն մինչեւ ցարական Ռուսաստանի խորքերը, Թիֆլիս, Պոլիս, Պաքու, Կան, Սասուն, Չէյթուն, Զաճըն, Ատանա, Մուսայ լեռ, Երեւան, Ալեքսանդրապոլ, Սարգարապատ, Պաղեստին, Սուրիա, Լիբանան, Իրան, Յունաստան, Ֆրանսա, Միացեալ Նահանգներ, Արժանքին, Ուրուկուայ եւ հերոսական Արցախ:

Յնչակեան կուսակցութիւնը անողոք կռիւ մղեց ցարական բռնատիրութեան դէմ, Ապտիլ Զամիտի վայրագութիւններուն դէմ, Իթթիհատի խարդաւանքներուն դէմ, քմակական զօրքերուն դէմ, անգլիական ու ֆրանսական գաղութատիրութիւններուն դէմ, ֆաշիստական Գերմանիոյ դէմ, Իրանի շահնշահական միապետութեան դէմ, վայրագ դրամատիրութեան դէմ, Հարաւային Ամերիկայի ռազմական խունտներուն դէմ, հասնելով մինչեւ Դարաբաղի ազգային-ազատագրական պայքարի առաջնագիծերը:

Հազարաւոր ուխտեալ եւ համակիր հնչակեան նահատակներ ինկան՝ հաւատարիմ մնալով իրենց ազգային եւ համամարդկային սկզբունքներուն: Անոնք ինկան ամէն տեղ, համոզուած ըլլալով, որ իրենց կը պահպանեն հայ ժողովուրդին եւ Հայաստանին ռազմավարական գերագոյն շահերը:

Յարգելի հանդիսակներ, Սիրելի ընկերակիցներ և ընկերներ,

Նահատակները անոնք են, որոնք գիտակցեալ մահով անմահացան՝ զոհուելով յանուն գաղափարի, հաւատոյ եւ հայրենիքի: Ըստ մեր կուսակցական աշխարհիկ բարոյական դասանալիքի, նահատակները կը գտնուին ամենաբարձր երկրամասոյց դիրքի վրայ: Հետեւաբար, մենք խտրականութիւն պիտի չունենք անոնց միջեւ. բոլորն ալ կը պատկանին ազգին ու հայրենիքին, եւ բոլորն ալ Յնչակեան նահատակներու յիշատակի օրը պիտի ոգեկոչուին խնդիրներով, յարգանքով եւ մեծարանքի խօսքերով: Յայտնութիւն մը ըրած չեմ ըլլար, երբ ըսեմ, թէ Պոլիս թուրքուս ատեն Գում Գարբուի եւ Պապ Ալիի ցոյցերն ու Պանք Օթոմանի գործողութիւնն ալ նկատի ունէի. երբ Սասուն ըսի, Մեծն Սուրբատն ու Հրայր Դժոխքն ալ նկատի ունէի. երբ Սարգարապատը յիշեցի, բոլորն ալ նկատի ունէի՝ Անկուր Պանդուխտը, Հայկ Բժշկեանն ու Արամ Մանուկեանը:

Մտովին յիշեցի բոլորը՝ յայտնի եւ անյայտ, բոլոր անոնք, որոնք այնտեղ էին, բոլոր անոնք, որոնք դիմագրաւեցին գիտակցեալ մահը, բոլոր անոնք, որ զոհուեցան եւ անոնք՝ որ չզոհուեցան, բոլոր անոնք, որոնք ամէն տեղ էին, ուր պետք էր ըլլային:

Աւարտելով այս բաժինը, կ'ուզեմ ընդգծել, որ այսօր այս ժամանակաշրջանը մարտիկի զգօն եւ արթուն հանգիստի ժամանակն է. կեանքի գնով կռուելու ժամանակը չէ, ֆիզիքապէս մեր կեանքը գոհաբերելու պահը չէ, այլ խաղաղութեան ժամանակն է: Այսօր աշխատելու եւ արարելու, Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութեան պիտոճէն հզօրացնելու, պետական սահմաններուն կանգնած մեր զինուոր գաւակներուն պաշտպանական պայմաններն ու սպառազինութիւնը արդիականացնելու, հայրենիքը անառիկ պահելու, պաշտպանելու եւ մատաղ կեանքերը խնայելու ժամանակն է:

Յարգելի բարեկամներ, Սիրելի ընկերակիցներ և ընկերներ,

Այս օրուան խորհուրդը, ինչպէս նաեւ մեր նահատակ նահատակներու անտեսանելի հսկող ներկայութիւնը մեզմէ կը պահանջեն ազնիւ ըլլալ եւ իրարու հետ խօսիլ բացէ ի բաց՝ առանց դիւստապիտական ոլորապտոյտ դարձուածքներու եւ առանց բառերը ծամելու: Ուստի, յստակ կենտր պիտի արձանագրենք եւ մեր տեսակետը պիտի արտայայտենք անոնց մասին:

Ա.- Հայաստանի 7 Յունիսի ընտրութիւնները.

Տասներկու օր առաջ Հայաստանի մէջ տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրութիւնները: Յստակ քննադատեցինք նախընտրական քարոզարշաւի ժամանակ բոլոր կողմերէն հնչած ու գործադրուած՝ ձեւական եւ բովանդակային անորակ ելոյթներն ու երեւոյթները:

Այսօր ընտրութիւնները աւարտած են առանց ուշագրաւ անակնկալներու: Կայ համոզիչ ճայներով ընտրուած իշխանութիւն մը. եւ անոր հսկելու եւ քննադատելու իրաւունքը ստացած ընդդիմութիւն մը: Յնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը, յարգելով Հայաստանի ժողովուրդին կամքն ու որոշումը, շնորհաւորեց մեծամասնութիւն կազմող քաղաքական ուժը եւ կոչ ուղղեց ընդդիմութեան՝ ստանձնելու իր կարելիք ու պատասխանատու պարտականութիւնը: Սիրելի՛ ազգակիցներ, իւրաքանչիւր ունիք մեր քաղաքական տեսակետներն ու համոզումները, իւրաքանչիւր կրնանք համաձայն ըլլալ կամ չըլլալ ընտրութիւններու արդիւնքով իշխանութեան եկած ուժի քաղաքականութեան հետ: Եկէք ամէն մէկս մեր համոզումները արտայայտենք քաղաքակիրթ ձեւով եւ եկէք Հայաստանի քաղաքական հակամարտութիւնը չտեղափոխենք Սփիւռք: Անցեալին դառն փորձառութիւնը ունեցած եւք եւ կարիքը չունիք զայն կրկնելու ու մեր լեզուն կրկին դառնացնելու:

Սփիւռքի մէջ արդէն ունիք մեզ հիւժոճ եւ օրըստօրէ ծանրացող բազմաթիւ խնդիրներ, որոնք բոլորիդ ծանօթ են եւ բացատրութեան կարիք չունինք:

Սակայն կ'ուզեմ առանձնաշատուկ ահազանգ հնչեցնել Միջին Արեւելքի մէջ արագօրէն զարգացող նեօ-օսմանական թրջական ազդեցութեան մասին, որ կը ձգտի փոխարինելու, եւ զգալի չափով արդէն իսկ փոխարինած է, նահանջող իրանեան ազդեցութիւնը:

Այս առնչութեամբ ուշագրաւ է նախագահ Էրտողանի օրեր առաջ կատարած յայտարարութիւնը. ըստ որուն՝ Սուրիոյ եւ Լիբանանի դէմ Իսրայէլի գործողութիւնները ուղղակի սպառնալիք կը հանդիսանան Թուրքիոյ անվտանգութեան համար: Ան նաեւ շեշտած է, որ Թուրքիան իր անվտանգութիւնն ու ռազմավարական շահերը չի դիտար միայն Սուրիոյ հետ իր պետական սահմաններուն շրջանակին մէջ, այլ ամբողջ աշխարհով նաեւ Լիբանանի վրայ:

Այս մտածողութիւնը նոր չէ, սակայն այսօր ան կը դրսեւորուի ամբողջ յստակ եւ ամբողջ համարձակ կերպով: Հետեւաբար, յատկապէս Միջին Արեւելքի հայ գաղութներուն մէջ, պարտաւոր ենք զգօն ըլլալ, հետեւիլ զարգացումներուն եւ պատրաստ ըլլալ դիմակայելու նեօ-օսմանական ծաւալապաշտութեան քաղաքական, մշակութային եւ ժողովրդագրական հետեւանքները:

Այս ուղղութեամբ մեզմէ կը պահանջուի ոչ միայն զգացական արձագանգ, այլեւ կազմակերպուած աշխատանք, ազգային հեռատեսութիւն եւ համայնքային պատրաստուածութիւն:

Բ.- Հայաստանի իշխանութեան եւ Սուրբ Էջմիածնի գահակալին միջեւ տիրող լարուածութիւնը.

Մեր խիղճը յոգնեցնող բարդ խնդիրներէն մէկը Հայաստանի քաղաքական իշխանութեան եւ Սուրբ Էջմիածնի գահակալին միջեւ տիրող լարուածութիւնն է: Նախ արձանագրենք, որ Հայ Առաքելական Եկեղեցին, իր զոյգ կաթողիկոսութիւններով եւ նուիրապետական աթոռներով, մեր ազգային մայր եկեղեցին է, Հայ Կաթողիկէն է Հայ Անտարակական եկեղեցիներուն կողքին:

Աւելի քան երեք տասնամեակ առաջ, երբ Էջմիածնի-ՎԱ Անթիլիաս կողմնորոշման խնդիրը կը բաժնէր սփիւռքահայութիւնը, Յնչակեան կուսակցութիւնը, որպէս նախաձեռնոր, իր հաւատարմութիւնը յայտնած էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, եւ հոգեւորականի կոչում ունեցող իր գաւակները կ'ընծայէր անոր ծառայութեան:

Դառնալով բուն նիւթն՝ բոլորիս յայտնի է, որ Գարեգին Բ. կաթողիկոսին եւ Հայաստանի իշխանութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող հակամարտութեան հիմնական պատճառը քաղաքական բնույթ ունի:

Յնչակեան կուսակցութեան ցանկութիւնը միշտ եղած է, որ այս լարուածութիւնը վերջ գտնէ եւ կողմերը յանգին փոխադարձ յարգանքի ու երկխօսութեան մթնոլորտի: Սակայն, ցաւօք, պիտի նշեմ, որ կողմերը մօտեցնելու մեր համեստ փորձերը ձախողութեամբ աւարտեցան:

Մենք կոչ ուղղեցինք, որ Էջմիածնի ընթացիկ ինքնամաքման ճանապարհով, սակայն ողջախոհութեան եւ ինքնաքննադատութեան մեր հրաւերին համարժեք արձագանգ չստացուեցաւ: Աւելին, անյարմար արձագանգներ հնչեցին մեր կուսակցութեան հանդէպ՝ Սուրբ Էջմիածնի մէջ ծառայող մեր գաւակներէն ոմանց կողմէ:

Այնուամենայնիւ, տակաւին յոյս ունինք, որ, յարջանաւոր իշխանութիւնը իր մէջ որդիական համեստութիւնը կը գտնէ, իսկ Գարեգին Բ. կաթողիկոսը ճիշդ կը գնահատէ տեղծուած իրավիճակն ու վերջին ընտրութիւններուն արդիւնքները. եւ Սուրբ Էջմիածնի կը վերադառնա իր բոլոր գաւակներուն՝ առանց խտրութեան եւ առանց բաժանարար գիծերու: Հակառակ պարագային, վնասը պիտի չսահմանափակուի միայն ներկայ վիճակով, այլ կրնայ ազդել նաեւ Մայր Աթոռի գահակալին համագաղային հեղինակութեան վրայ:

Այստեղ անպայման կ'ուզեմ ողջունել Ն.Ս.Ս.Ս. Արամ Ա. կաթողիկոսին մշտական հայրական հոգատարութիւնը, հանդարտեցնող կեցուածքն ու հայութեան միասնականութեան ուղղուած անոր հետեւողական յորդորներն ու ջանքերը:

Գ.-Հայոց Տեղապանութիւն եւ ճանաչում.

Հայոց Տեղապանութեան միջազգային ճանաչման հարցը կը մնայ մեր առանցքային խնդիրներէն մէկը: Կար ժամանակ, երբ մեր սերունդին մեծ մասը համոզուած էինք, թէ միայն գէներով կարելի է ապահովել հայ ժողովուրդին փրկութիւնը: Թերեւս այդ էր ժամանակի պահանջը, եւ այդ սերունդը պատեհ պահին կրցաւ ազատագրել Արցախը: Սակայն, Հայաստանի իրադարձող իշխանութիւնները, չկարենալով այդ յարջանակը ամրագրել քաղաքական ու դիւստապիտական միջոցներով, մէկ այլ անպատեհ ժամանակին կորսնցուցին զայն:

ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԸՆԿ. ՎԱՆԻԿ

ՏԱԳԷՍԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Յարգարժան հիւրեր, Սիրելի՛ ընկերակիցներ և ընկերներ,



Ամէն տարուայ նման, յունիսեան այս օրը մէկտեղած է մեզ՝ ապրելու յարգանքի, յիշողութեան եւ ազգային ուխտի խորհրդաւոր պահ մը, ոգեկոչելու Սոցիալ Դեմոկրատ Հրեան կուսակցութեան այն բոլոր անմահ նահատակները, որոնք իրենց կեանքը գոհաբերեցին յանուն հայ ժողովուրդի ազատութեան, ազգային իրաւունքներուն, ընկերային արդարութեան եւ մարդկային արժանապատուութեան:

Այս մեզի համար սովորական յիշատակի օր մը չէ, այլ վերափոխման, ազգային պատասխանատուութեան եւ ուխտի հրաւեր է, նկատի առնելով որ կը խնարհիք յիշատակին առջեւ բոլոր անոնք, որոնք պայքարեցան, տառապեցան, բանտարկուեցան, աքսորուեցան եւ զոհուեցան հայ ժողովուրդի ազատութեան համար:

Կը յիշեք յատկապէս Յնչակեան Զան ղեկավարները՝ հայ ժողովուրդի այն փայլուն հերոսները, որոնք 1915 թուականի Յունիս 15-ին Օսմանեան կայսրութեան բռնապետներուն ձեռամբ կախաղան բարձրացան Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Անոնց մեղքը պայքարն էր յանուն արդարութեան եւ ազատ ապրելու իրաւունքին:

Այդ գործին լծուած Փարամազն ու իր 19 ընկերները շատ լաւ գիտէին, թէ ինչ ճակատագիր կը սպասէր իրենց: Սակայն չկախցան, չընկրկեցան, չծախեցին իրենց սնդգ-բունքները եւ չիրաժարեցան զաղափարէն ու համոզումներէն: Զսանները լոկ կուսակցական գործիչներ էին, այլ՝ ազգային արժանապատուութեան տիրաններ, խորհրդանշելով այն հայը, որ պատրաստ է ամէն զոհողութեամբ տեր կանգնելու ժողովուրդին իրաւունքներուն ու հայրենիքի ապագային: Կախաղան բարձրանալով անոնք յաղթեցին, որովհետեւ պատմութիւնը կը յիշէ հերոսները, ոչ թէ բռնակալ դահիճները:

Զսաններէն անդին, Յնչակեան պատմութիւնը գրուած է անձնուիրութեան եւ ծառայութեան ոսկէ տառերով՝ սկսեալ Սասնոյ, Չէյթունի եւ Զանոյ ինքնապաշտպանութեան օրերէն, մինչեւ Սիւնիքի եւ Արցախի պաշտպանութեան մարտերը, անցնելով հայապահպանութեան ջանքերէն եւ Սփիւռքի գաղութներու կազմաւորումէն: Յնչակեան կուսակցութիւնը միշտ եղած է ժողովուրդին կողքին՝ ազգային ինքնութեան պաշտպանութեան խրամատներուն մէջ՝ անշեղ հաւատքով եւ անսակարկ նուիրումով:

Սիրելիներ,

Ընդունելով հանդերձ, որ Զսաններու նահատակութենէն 111 տարի ետք բաւական փոխուած են աշխարհն ու քաղաքական քարտեզները, կը նկատենք արդարութեան պայքարի շարունակութիւնը: Այսօր եւս, շատեր կը պայքարին իրենց իրաւունքներուն համար, պատերազմներն ու բռնութիւնները կը խլեն մարդկային անմեղ կեանքեր, Արեւելքը տակաւին կը բոլորէ վտանգաւոր ժամանակաշրջան մը՝ որպէս միջազգային շահերու բախման դաշտ: Այս իրավիճակին մէջ, Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութիւնը կը մնայ հաւատարիմ իր պատմական սկզբունքներուն. կը հաւատանք խաղաղութեան եւ մարդկային արժանապատուութեան, կը դատապարտենք անմեղ քաղաքացիներու դէմ իրականացուող բռնութիւնները, գանգուածային աւերածութիւններն ու ռազմական քաղաքականութիւնները, ուր որ ալ ըլլան անոնք:

Փոխարենը, կը հաւատանք, որ ժողովուրդները ունին իրաւունք՝ իրենց հայրենիքին մէջ ապրելու ազատ, անվտանգ եւ արժանապատիւ կեանք մը: Կը պահանջենք, որ դարդին մարդկային ողբերգութիւններուն պատճառ հանդիսացող քաղաքականութիւնները: Կը շեշտենք, որ երկարատեւ խաղաղութիւնը չի կրնար հիմնուիլ ուժի, բռնութեան եւ պատերազմի վրայ, այլ միայն արդարութեան, միջազգային իրաւունքի եւ քաղաքական լուծումի:

Նոյն պատկերացումը ունիք նաեւ Լիբանանի պարագային ու կը պահանջենք, որ դարդին խրայելեան ոտնձգութիւնները, բռնագրաւող բանակը դուրս գայ լիբանանեան հողերէն, յարգէ Լիբանանի գերիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը, որովհետեւ լիբանանցիներն եւս արժանի է խաղաղ եւ անվտանգ պայմաններով կերտելու իր ապագան:

Սակայն, ինքնաքննադատութիւնը անխուսափելի է այստեղ: Լիբանանցիները տասնամեակներ շարունակ վերածուած են այլոց հակամարտութիւններու բեմադրութեան, վճարելով սուղ գին՝ սեփական տնտեսութենէն, ապահովութենէն եւ կեանքէն: Ահա թէ ինչու Յնչակեան կուսակցութիւնը կը կանգնի Լիբանանի պետութեան կողքին՝ հանրապետութեան նախագահին, օրինական կառավարութեան, եւ լիբանանեան բանակին կողքին, հաւատարմով որ Լիբանանի ճակատագիրը պետք չէ վճռել արտաքին ուժերը, այլ պետական հաստատութիւնները պետք է դառնան ազգային կեանքին առանցքը, ունենան պատերազմի եւ խաղաղութեան որոշումին մենաշնորհը ու պաշտպանութիւնը կազմակերպուի օրինական կառոյցներուն միջոցով: Կը հաւատանք, որ Լիբանանի անվտանգութեան երաշխիքը ազգային բանակն է, ազգային միասնականութիւնը եւ պետական հաստատութիւններուն հզօրացումը:

Վերջապէ՛ս հասած է ժամը, որ լիբանանցիները չգործի այլոց առճակատումի գոհասեղանին վրայ, այլ գերադասուի ազգային շահը, որովհետեւ այս ժողովուրդը եւս արժանի է խաղաղ ապրելու իր հողին վրայ, զարգացող տնտեսութեամբ եւ արժանապատիւ կեանքով կառուցելու լաւագոյն

«Նոր Սերունդ» ամսաթերթ

ԸՆԿԵՐ ՆԱԶԱՐԷԹ ԸԵՐԷՃԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍԻՏՆԻ

Վերջին շաբաթներին Սիտնիի հայ համայնքը հիւրընկալեց լիբանանահայ կրթական, մշակութային գործիչ, մանկավարժ եւ ներկայիս Լիբանանի մէջ լոյս տեսնող «Արարատ» օրաթերթի տնօրէն-խմբագիր ընկեր Նազարէթ ԸԵՐԷՃԵԱՆԸ:

Ընկերոջ այցելութիւնը երկուստեք օգտաշատ եւ հաճելի առիթ հանդիսացաւ թէ՛ համայնքին եւ թէ՛ իրեն համար: Իր կեցութեան ընթացքին ընկեր Նազարէթ առիթը ունեցաւ ծանօթանալու համայնքի հոգեւոր պետերուն, այցելելու հայկական գոյգ վարժարանները՝ Զամազայիի Զուլփըն ճեմարանը եւ ԶԲԸՄ-ի Ալեքսանտր վարժարանը, ինչպէս նաեւ հանդիպելու համայնքի նուիրեալ ծառայողներուն եւ հայրորդիներուն, որոնցմէ շատերուն հետ սերտ կապ հաստատեց իր մասնակցած ու բանախօսած ձեռնարկներուն միջոցով:



Ընկեր Նազարէթ մեծ հետաքրքրութեամբ հետեւեցաւ համայնքային կեանքին եւ մասնաւորաբար Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան եւ անոր հովանիին տակ գործող կառոյցներու աշխատանքներուն: Որպէս մամուլի փորձառու ծառայող, բարձր գնահատեց «Նոր Սերունդ» ամսաթերթի ճաշակաւոր, բովանդակալից եւ հետեւողական հրատարակութիւնը, որ յատկապէս իր տպագրական եւ բովանդակային որակաւոր դիմագիծով կը թեւակոխէ իր չորրորդ տարին:

Իր այցելութեան ընթացքին ան այցելեց նաեւ «2RRR» համայնքային ռատիոկայանը, ուրի՛ք արդէն 35 տարի իլեր կը սփռուի «Նոր Սերունդ»-ի ձայնը ռատիոծափով: Ընկերը ուրախութեամբ անդրադարձաւ նաեւ «Նոր Սերունդ»-ի պատանեկան պարախումբի աշխուժ գործունեութեան՝ գայն նկատելով կարեւորագոյն երէտոյթներէն մէկը, որ պատանիները կը կապէ հայ մշակոյթին եւ հայկական պարարուեստին հետ:

Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան Վարիչ մարմինը եւ յարակից գործող միութիւնները բարձր կը գնահատեն ընկեր Նազարէթ ԸԵՐԷՃԵԱՆԻ այցելութիւնը Աւստրալիա, որովհետեւ ան իր պտոյտի եւ հանգիստի պահերէն բաժին հանեց նաեւ համայնքին ու մեր կառոյցներուն՝ իր ներկայութեամբ, հետաքրքրութեամբ եւ բարոյական աջակցութեամբ զօրակցելու համար:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Աւստրալիոյ Նոր Սերունդ Մշակութային Սիւրբեան եւ ՆՍՍՄ-ի Տիկնանց Օժանդակ վարչութիւնները, գնահատելով «Արարատ» օրաթերթի գործունեութիւնը, կը նուիրեն \$1000:

ԸՆԿ. ԱԼԵՔՍԱՆ ՔԵՕԾԿԵՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Շարունակուած էջ 2-էն

Չայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը պէտք է դառնայ պետութիւններու շահերու բախման խաչմերուկին վրայ շահարկման նիւթ: Ան բացառապէս մարդկութեան դէմ գործուած ոճիր մըն է, եւ այդ պայքարը պէտք է մղուի ոչ թէ միայն հայկական դիրքերէ մեկնած, այլ որպէս ամբողջ մարդկութեան հասցուած վիրաւորանքի եւ անարդարութեան դէմ պայքար:

Այս նպատակով անհրաժեշտ է ճշմարտութիւնը նախ հասցնել Թուրքիոյ ժողովուրդներուն՝ իրենց լեզուով եւ իրենց հասու ձեւերով: Այդ պարագային այլ ժողովուրդներու եւ պետութիւններու ճանաչումը կը դառնայ իսկական ճանաչում, այլ ոչ թէ ընտրական արշաւներու ընթացքին հայկական ձայներ ապահովելու միջոց:

Յարգելի՛ ներկաներ, Սիրելի՛ ընկերուհիներ եւ ընկերներ, Միայն խորհրդածելու տակաւին շատ նիւթեր ունինք, սակայն ժամանակի տղութիւնը մեզի չ'արտօսեր այսօր խօսիլ ամէն ինչի մասին: Աւարտելու համար պիտի նշեմ, որ արդի հասկացողութեամբ հայերս որպէս պետական ժողովուրդ դեռ երիտասարդ ենք՝ բաղդատած այն ժողովուրդներուն, որոնք դարեր շարունակ անընդհատ եւ անընդմէջ պետականութիւն ունեցած են: Սակայն, նայելով այսօրուան Չայաստանին, կը տեսնենք, որ ան իր ձեռքբերումներով իր ետեւը ձգած է բազմաթիւ մեծ ու փոքր պետութիւններ: Ակնյայտ է, որ մեր ժողովուրդը իր մէջ ունի այն կարողութիւնները, որոնք հարկաւոր են, որոնք զինք պիտի դարձնեն տարածաշրջանի իւրայատուկ զարգացած եւ յառաջդիմած երկիրներէն մէկը:

Ուժ տանք ընկերներ Մայր Չայաստանին, հզօրացնենք սեղմուած աղամանը դարձած պետութիւնը, որպէսզի մեր նահատակներուն հոգիները հանգիստ գտնեն, եւ անոնց սիրանքներուն երախտագետ, արժանի հետեւորդներու կոչումին արժանի ըլլանք:

Սիրելի՛ հարազատներ, Աւարտելով խօսքս, յորդոր խնդրանք մը ունիմ բոլորիդ. երբ Չայաստան այցելէք, ի շարս բոլոր տեսարժան եւ անաւոյական վայրերուն, ծաղկեփունջ մը տարեք Յարթասակի այգի: Նախ պատշաճաբար երկար դիտեցէք Արարատը, ապա դարձեք դէպի վեհաշուգ Մայր Չայաստանը, խոնարհեցէք ձեր գլուխները, որքե ծաղիկները անմար կրակին առջեւ եւ մտովի կրկնեցէք այնտեղ արձանագրուած պատգամը:

«Ոչ ոք չի մոռացուել, ոչինչ չի մոռացուել»:
Կեցցէ՛ Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութիւնը:
Փա՛ռք նահատակներուն:
Կեցցէ՛ ազատ, անկախ, ընկերավար եւ ժողովրդավար Չայաստանը:

Infographic with statistics: ԱՌՈՂՋԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՏԱՆՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՅՑՄ ԳՐԱՔ 0950101 ՏԱՐԱՆՈՒՑԱՐԱՆԻ ԲՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԿԷՍ ԳԻՆՈՎ: ՄՏԱՆԷՔ 50% ԵՐԴՉ՝ ԱՌՈՂՋԱՄԱՆԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:

- Առաւելութիւններ
 - Կէս Գին, 50% զեղջ՝ արեան բոլոր քննութիւններուն համար:
 - Մատչելի Ծառայութեան Նկարիչ, 25% զեղջ՝ ճառագայթային նկարիչ (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
 - Բարձր Որակ, «Վստահելի քննութիւններ» «Սեն Մարք» (St. Marc) տարրալուծարաններուն մէջ:
- Ինչպէ՛ս Օգտուիլ
 - Այցեցեցէ՛ք ՀԿԲՄ-ի դարձանատունը:
 - Խնդրեցէ՛ք ձեր բժշկական ուղեգիրը:
 - Ներկայացուցէ՛ք ձեր ՀԿԲՄ-ի ուղեգիրը «Սեն Մարք» տարրալուծարան:
 - Ստացէ՛ք 50% զեղջ անմիջապէս:

Առաջնահերթութիւն տուէ՛ք ձեր առողջութեան այսօր: Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործող է:

ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՈՒՂԻՈՎ... ԿԱՌՈՅՆԵՐԵՆ ՆԵՐՍ, ԿԱԳՄԱԿԵՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԾԱՄԲՈՎ ԵՎ ՄԵՐ ԽԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՋ ՄԵՆՔ ՉԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՉԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԷՆ ՕՐ ԽԱՄԱՏՈՒՄ ԿԱՊԵՏԵՆԵՆ ԸՄԵՐ ՄԵՋ»

Շարունակուած էջ 1-էն

Կառոյցներէն ներս, կազմակերպութիւններուն ճամբով եւ մեր խամայնական կեանքին մէջ մենք շարունակենք Չայաստանը ամէն օր Խամատքով կապեցնել մեր մէջ», ըսաւ ան: Առաջնորդ Սրբազանը ողջունեց բոլոր անոնք, որոնք մեր պատմական մեծերուն օրինակով այսօր կը շարունակեն մեր պայքարը:



Չայոցիութեան պաշտօնական բաժինը իր աւարտին հասաւ «Ուխտի Չրաւեր» երգով, կատարողութեամբ «Կայծ» երգչախումբին եւ բոլոր ներկաներուն, որմէ ետք Յովիկ Թաֆրանեան ներկայացուց փունջ մը ազգային յեղափոխական երգեր:

Ոգեկոչելով Քսաններուն եւ ինչպէս բոլոր նահատակներուն յիշատակը, Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան մերօրեայ սերունդը վերահաստատեց իր յանձնառութիւնը՝ հերոսներուն աւանդին տէր կանգնելու, անոնց արեան գնով կերտուած արժեքները կրելու եւ գալիք սերունդները ինչպէս նոյն ոգիով ներշնչելու պարտականութեան, որովհետեւ այդպէս նահատակները չեն մեռնիր, այլ նոր սերունդին մէջ կը ծնին նորանոր հերոսներ:

ԸՆԿ. ՎԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Շարունակուած էջ 2-էն

ապագան՝ գալիք սերունդներուն ժառանգելով ոչ թէ ւերուած եւ հիւժո՞ղ, այլ արդար, ծաղկուն եւ բարգաւաճ պետութիւն մը:

Յարգելի՛ ներկաներ, Սիրելի՛ ընկերուհիներ եւ ընկերներ, Մեր կուսակցութիւնը կը հաւատայ, որ մեր տարածաշրջանին խնդիրները չունին զենքով մնայուն լուծում, այլ կայուն խաղաղութիւնը կը խառնուի քաղաքական կամքով, դիւանագիտութեամբ, երկխօսութեամբ եւ բանակցութիւններով: Կը հաւատանք, որ Լիբանանի իրաւունքները կարելի է պաշտպանել առանց կործանարար պատերազմներու եւ յաւելեալ աներուածութեան: Կարելի՛ է միաժամանակ պահպանել թէ՛ ազգային արժանապատուութիւնը, թէ՛ մարդկային կեանքը եւ թէ՛ ինքնիշխանութիւնը, կառուցելով պետական հաստատութիւններուն: Ահա՛ մեր քաղաքական համոզումը, մեր պատասխանատուութիւնը եւ մեր ուղին:

Մենք, լիբանանահայերս, խորապէս կապուած ենք այս երկրին, որ մեզի տուաւ վերածնելու, ազգային ինքնութիւնը պահպանելու հնարաւորութիւն եւ արժանապատիւ քաղաքացիի կեանք: Չեղաւարտ Լիբանանի կայունութիւնը, խաղաղութիւնը եւ վերականգնումը եւս անբաժան մասնիկն են մեր ազգային շահերուն:

Սիրելի՛ երիտասարդներ, Այսօրուան պատգամը առաջին հերթին ուղղուած է ձեզի: Մեր նահատակները իրենց կեանքը զոհեցին, որպէսզի դուք կարենաք ապրիլ ազատ եւ արժանապատիւ: Անոնք ձեզի կը փոխանցեն ո՛չ թէ ատելութիւն, այլ՝ պատասխանատուութիւն, ո՛չ թէ յուսահատութիւն, այլ՝ հաւատք, ո՛չ թէ պառակտում, այլ՝ միութիւն, ո՛չ թէ անձնական շահ, այլ՝ ազգային ծառայութիւն: Ուստի, պահեցէ՛ք ձեր ինքնութիւնը, ձեր լեզուն եւ մշակոյթը: Ծառայեցէ՛ք ձեր ժողովուրդին եւ հայրենիքին: Յանձնառու՛ եղէք արդարութեան եւ ճշմարտութեան: Միշտ յիշեցէ՛ք, թէ պատմութիւնը ցոյց տուած է, որ յաջողութիւններու հասած ենք երբ եղած ենք միասնական, իսկ պառակտումը առաջնորդած է միայն պարտութեան եւ անկումի: Ուստի, հրաժարի՛ք հատուածական նեղ շահերէն եւ զինուի՛ք միասնականութեամբ, որովհետեւ «հայ ժողովուրդին փրկութիւնը իր միասնական ուժին մէջ է»:

Սիրելի՛ ընկերուհիներ եւ ընկերներ, Այսօր մենք չենք սգար, այլ կը հպարտանանք մեր նահատակներով, մեր պատմութեամբ եւ մեր ժողովուրդով: Չնչակեան հերոսներուն եւ հայ ժողովուրդի բոլոր նահատակներուն յիշատակին առջեւ խոնարհելով մենք կը վերանորոգենք մեր ուխտը: Ուխտ՝ ծառայելու մեր ժողովուրդին, պաշտպանելու Չայաստանի անկախութիւնն ու Լիբանանի կայունութիւնը, կառուցած մնալու խաղաղութեան, արդարութեան եւ մարդկային արժանապատուութեան: Միայն այ՛դ պարագային արժանի կ'ըլլանք մեր հերոս նահատակներու ժառանգած անաւդին:

Փա՛ռք Չնչակեան կուսակցութեան բոլոր նահատակներուն: Փա՛ռք հայ ժողովուրդի բոլոր հերոսներուն: Կեցցէ՛ հայ ժողովուրդի միասնութիւնը: Կեցցէ՛ Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութիւնը: Կեցցէ՛ն գերիշխան Լիբանանը, ազատ, անկախ, ինքնիշխան, ժողովրդավար եւ ընկերավար Չայաստանը:

Ներկայացման մը առիթով ՈՒՐԱԽ ԵՒ ՏԵՍՈՒՐ, ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԽՈՂԵՐ

Ընդառաջելով երբեմնի մէկ դասընկերոջս հրաւերին եւ քաջալերանքով մէկ ուրիշ երբեմնի դասընկերոջս, 20 Յունիսի երեկոյեան ներկայ գտնուեցայ Թեքեան մշակութային միութեան «Երուանդ Օտեան» թատերախումբի «Թեկոյ մը գտե՛ք» ներկայացումին (հեղինակ՝ ամերիկացի գրող Քէն Լուսովիկ, Յակոբ Տեր Մելքոնեան թատերարարի):

Վերջին անգամ թատերական ներկայացում դիտած եմ երեւի 2010-ականներու վերջին՝ Երեւանի մէջ, եւ ցաւով արձանագրած, որ հայրենական թատերական արուեստը զգալի նահանջ արձանագրած էր: Անկէ ետք չէի ուզած թատրոն մտնել:

Ինչ մեղքս պահեմ, նշածս պատճառով այդքան ալ չէի փափաքեր դիտել վերը նշուած ներկայացումը՝ յուսախաբութեան դառնութեան տարր մը չաւելցնելու համար: Այդուհանդերձ, կարճատեւ տատանումէ մը ետք գացի եւ ... հիացա՛ր: Թատերական քննադատ չեմ, սակայն գեղարուեստական նուազագոյն ճաշակ մը ունիմ կարծեմ, եւ ուրախութեամբ կ'արձանագրեմ, որ խաղարկութիւնը, այլեւ բեմայարդարումը եւ թատերական ներկայացման մը անհրաժեշտ միւս տարրերէն շատեր պարզապէս գերազանց էին, ինչի համար շնորհաւորելի են բոլորը՝ վարչական անդամներէն մինչեւ դերասաններ եւ անձնակազմ: Յատկապէս անկրափաք եր բեմադրիչ, բեմայարդար, թատերակի անգլերէն թարգմանիչ, այլեւ տարագլուխ, լուսային ու ձայնային ապահովման աշխատանքներու «շարժիչ» Սուրեն Խտըշեանի տքնաջան ու բժախնորի աշխատանքը: Սուրենը այսօր կը շարունակէ բարձր պահել հայ արուեստին

ԳԵՌՈՐԳ ՆԱԹԱԼԻ (Եագըճեան)

Նուիրեալ հտըշեան գերդաստանին պատիւը: Վստահ եմ, որ ան դեռ չէ ըսած արուեստի մարզին մէջ իր վերջին խօսքը եւ մեզ պիտի ուրախացնէ նորանոր նուաճումներով:

Այս դրական տողերէն ետք ցաւով, այլեւ դառնութեամբ պիտի արձանագրեմ ներկայացման ու այդ առթիւ գունաւոր տպագրուած գրքոյկի բովանդակութեան առնչուած քանի մը տխուր փաստեր:

- Լեզուական առումով՝ թարգմանութիւնը խոցելի էր: Գրեթէ բոլոր ներգործական բայերուն ուղիղ խնդիրները ինչեցին տրական հոլովով՝ հայցականներու փոխարէն (արեւմտահայերէն ճիշդ ձեւերն են՝ զիս ընդունեց, զիս հրաւիրեց, զիս տարաւ եւ այլն): Կ'առաջարկեմ թարգմանուած որեւէ գործ բեմ հանելէ առաջ յանձնել լեզուական խմբագրի՝ սխալներ ակամայ չտարածելու համար: Ի վերջոյ, թատրոնն ալ դպրոց մըն է, որ կը ծառայէ - պէ՛տք է ծառայէ - հասարակութեան ճիշտ դաստիարակութեան՝ բոլոր, այդ թուին՝ լեզուական, առումներով:
- 48 էջ ծաւալ ունեցող գրքոյկին ընդամենը 4 էջերը, այսինքն 10 տողոսէն ալ պակասը, կը վերաբերին թատերակին, անոր հեղինակին ու ներկայացումին: Մնացեալ էջերը ողողուած են բացառապէս բարեմաղթանքներով եւ

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՋԱԿԵՐԸ ՎԱՌ

Մինչդեռ փողերի հնչյունները շեփոքում են Յաղոթի անունը, Մինչդեռ դափնեպսակը պսակում է Փառքի ճակատները, Յիշողության հանդիսաւոր թմբուկները Դոփում են, Եւ վիշտը հսկում է այնտեղ, Ուր սրբազան փոշին է կուտակուում: Որովհետեւ ոչ մի պայծառ յաղթութիւն Փողփողացող դրօշներով պարզուած Չի կարող լուսաբաց արելել Աշխարհի ազատութեան վրայ, Եթէ քաջերը չքայլէին Արեան եւ կրակի միջով Պահպանելու Աստծոյ կողմից Իրենց վստահուած պատգամը:

Անկախութեան տօնական զանգը չի հնչում Բացի լռութեամբ, երբ սգացողը աղօթում է. Գարնանային ոչ մի հիմն չի ոգում Առանց ընկածների անունները հոլովելով: Մարմարեայ քարերի տակ, Ամեն դաշտում եւ բացատում, Հանգստանում են նրանք, Ովքեր վճարել են հայրենիքի պարտքը: Աստղերը փայլում են , Մեր դրօշների վերելում, ծածանում են, Ազատութեան արմատները աճում են Դամբարանների մէջ:

Ո՛վ հզօր հոգիներ, որ լսեցիք Վտանգի ճիչը, Թողեցիք տաք օճախները խաղաղ երկնքի տակ, Համբուրեցիք սիրելիների շուրթերը Նրանց արցունքներով թրջուած, Եւ անվախ քայլեցիք դէպի կռուի դիրքերը...

Ի՞նչ մահականացու չափանիշ կարող է չափել Ձեր վեհութիւնը, Ո՛վ հայրենիքի ազատութեան պահապաններ: Դուք տուեցիք ձեր երիտասարդութիւնը, Ձեր ծիծաղը եւ ձեր շունչը, Որպէսզի գոհողութեամբ գնէք կեանքը Բազմութիւնների համար:

Նրանք ոսկի չխնդրեցին, Ոչ քանակագործի գովքը փնտռեցին, Ոչ էլ երագեցին յուշարձանների մասին Հետագայ օրերում: Նրանք միայն գիտէին, Որ պայքարի կոչը հնչել է, Աւելի սրբազան, Զան տանը գտնուած անվտանգութիւնը: Միւսների համար գոհուելը Նրանց ընտրած արուեստն էր, Չնայած մահն արդէն ստուերել էր Իւրաքանչիւր սիրտ: Արդարեւ, Նրանք դիմում էին այնտեղ, Որ կարմիր փողորկներն էին խռնուում, Եւ կեանքի ջահը բարձր էին պահում Մուտք աշխարհի առջեւ:

Նրանք սուգուեցին որոտի միջով Մարտի բոցերի մէջ, Հովիտներով, որոնք ծածկուած էին ծխով Եւ երկաթէ մշուշով: Նրանք գրոհեցին Կրակէ դարպասների վրայ, Որ մարդիկ անուանում են յուսահատութիւն, Մինչդեռ դժոխքն ինքնին շնչում է օդում: Սակայն նրանք, որպէս քաջարի ոգիներ Դեռ բարձրանում էին վեր, Երկրային տառապանքից Եւ թնդանթների կռիւ անցած, Մինչեւ հրեշտակները տարան նրանց Կեանքի յաւերժական դաշտեր:

Եւ ի՞նչ շահուեց այդ անմահ գնով: Ոչ միայն յիշուող, ապա կորցրած կռիւներ, Ոչ անցողիկ յաղթանակներ, Որոնք մարում են փոշու մէջ, Ոչ էլ փտած, ժանգով կտորուած կայսրութիւն: Նրանք գոհաբերութիւն կատարեցին Իւրաքանչիւր լուսաբացի համար, Որը արթնացնում է երեխային հաղաղ մարգագետնի վրայ, Իւրաքանչիւր լապտեր, Իւրաքանչիւր լապտերի համար, Սիրոյ համար, որը ծաղկում է այնտեղ, Որտեղ մի ժամանակ կործանուում էր Սէրը...

Իւրաքանչիւր տան համար, Որտեղ քաղցրօրէն մտում է սէրը, Իւրաքանչիւր դպրոցի բակ, Որ պայծառ է անհանգիստ օրերի մէջ, Իւրաքանչիւր եկեղեցու զանգ, Որ հնչում է առաւօտեան, Իւրաքանչիւր խոնարհ քաղաքացի, Որ չի կքել վախից, Այս ամէնը դիմանում են, որովհետեւ, Երբ պարտականութիւնը կանչում է, Անսասան սրտերը ո՛չ թոյլ են, Ո՛չ էլ կանգ առած: Նրանք տալիս են այն, Ինչ միայն հերոսներն են համարձակում տալ.

Ապրելու իրաւունքը Անթիւ ու անյայտ հոգիների համար:

Մեր պարտքը նրանց հանդէպ Ոչ մի դար չի կարող շնչել, Ժամանակն աւելի է խորացնում Նրանց շնորհի վեհութիւնը: Այն աճում է ամէն անցնող տարուայ հետ, Աւելի լուսաւոր, աւելի հանդիսաւոր Աւելի թանկ: Զանգի ազատութիւնը Եժանագին գնուած բոց չէ, Ոչ էլ խաղաղութիւնը՝ մրցանակ, Որը ձեռք է բերում պայքարով: Երկնքի տակ գտնուող Ամենաբարձր պարգեւները Գնում են ամենայոժարակամօրէն Նուիրաբերուած կեանքերով:

Ի՞նչ մարմարէ լիսեռ, Ի՞նչ պրոնգ, ի՞նչ բարձր գմբէթ Կարող է պարունակել մեր Հայրենական պարտքի ամբողջութիւնը: Նրանց նուաճած քաջութեան Ամենամեծ յուշարձանը Մեր շուրջն է՝ փայլելով արեւի տակ. Մի ազգ, որը ծովից ծով է բարձրանում, Դեռեւս յոյսով պսակուած Եւ ազատութեամբ գօտետրուած: Մի ժողովուրդ, որ տարիների ընթացքում Առաջ է շարժում, Չոհաբերութեան միջոցով ուժեղացած Եւ արցունքներով սրբագործուած:

Երկրի իւրաքանչիւր անկիւնում ընկած են Անյայտ քաջ հոգիները ժայռերի խորքում: Իւրաքանչիւր հանգստավայրում, Որտեղ պառկած են զինուորները, Պատմութիւնները չափազանց անձայրածիր են Սովորական սրտերի համար: Այնտեղ հայրենական սերը փայլում է Աւելի պայծառ, քան սուտերը, Եւ անձնուրաց գործերը գերազանցում են Բոլոր երկրային պարգեւներին: Այդպիսի քաջութիւնը այնքան վեհութեամբ է Արժու մարդկութեան վրայ, Եւ խօսքը կարկամում է, թոյլ, անիմաստ եւ կոյր: Արարատեան դաշտերից Մինչեւ Արագածի սառցակալած քառագագաթը, Շիրակից, որը լիացել է տեղատարափ անձրեւից, Սեւանայ ծովից մինչեւ կատաղի Եւ հեռաւոր ժեռուները, Որտեղ Սարդարապատը հնչեցրել է Պատերազմի թմբուկները, Դարաքիչիսան արծազանգել է, Եւ Բաշ Ապարանը ոգել է, Հայաստանի ամենահաւատարիմ որդիները Կանգնած են եղել, Եվ գոհաբերութեամբ կնքել են ազգի բարին: Նրանք պայքարել են, Որ ազատութիւնը բարձրանայ, Հորիզոնից վեր: Մեծ բանաստեղծները երգել են, Որ սերը շարժում է աստղերին Բարձրութեան վրայ, Եւ առաջնորդում է Պատուող երկիւնքները երկնքով... Սակայն այստեղ՝ սուրբ գերեզմանների մէջ, Մենք տեսնում ենք, Սվրը դեռեւս ձեւաւորում է Պատմութեան ընթացքը: Սերը զինուորին տանում է Թնդանթի շնչի միջով, Սերը նրան ուժ է տալիս Անտարքթր նայել մահուանը, Սերը բարձրացնում է ջահը Իւրաքանչիւր ընկած նուիրեալի ձեռքին, Եւ այսպէս, քաջերի կողմից վստահուած բոցը, Երբեք չի խորտակուում մոռացուած գերեզմանում: Ամէն դարաշրջանում նրա փայլը մնում է, Մի փարոս՝ անսասան, սուրբ, պայծառ եւ մաքուր: Եթէ փողորկները կուտակուեն Եւ ստուերները բարձրանան, Ազատութեան կրակը կը բոցավառուի երկնքում: Նրանց համար, Ովքեր գոհուեցին դրօշի լոյսի տակ, Ազատութեան ոգին պայծառութեամբ հրավառելով:

Մենք խոնարհուում ենք Նրանց յիշատակի եւ փառքի առջեւ: Մենք յարգանքով ենք խօսում Իւրաքանչիւր սրբազան անուան մասին: Նրանց փառքը յաւերժական է, Ինչպէս արեւը, Նրանց ազնիւ աշխատանքը Երբեք իսկապէս չի աւարտուի: Եւ մինչ այն, որ հզօր հայրենիքը կը մնայ, Նրա հոգին կ'ամբողջանայ մեր սրտերում՝ Ուժեղ եւ վստահ, Տակաւին մեզ առաջ մղելու Փորձութիւնների միջով Դեպի նորանոր յաղթանակներ:

Մենք խոնարհուում ենք Նրանց յիշատակի եւ փառքի առջեւ: Մենք յարգանքով ենք խօսում Իւրաքանչիւր սրբազան անուան մասին: Նրանց փառքը յաւերժական է, Ինչպէս արեւը, Նրանց ազնիւ աշխատանքը Երբեք իսկապէս չի աւարտուի: Եւ մինչ այն, որ հզօր հայրենիքը կը մնայ, Նրա հոգին կ'ամբողջանայ մեր սրտերում՝ Ուժեղ եւ վստահ, Տակաւին մեզ առաջ մղելու Փորձութիւնների միջով Դեպի նորանոր յաղթանակներ:

ԳՐԻՇ ԴԱԹԵԱՆ
(Կլէտնէլ, Գալիֆորնիա)

ՈՒՐԱԽ ԵՒ ՏԵՈՒԻ, ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԽՈՂԵՐ

Շարունակուած էջ 3-էն

ծանուցումներով: Նիւթականի ապահովումը պետք չէ մղել այս աստիճան ծայրայեղութեան:

- Առաջին, անստորագիր էջին ամենէն սկիզբը գրուած է, թէ Թեքեան մշակութային միութիւնը հիմնուած է 1945-ին: Ընդհ ի, թէ միութեան անուանադիր «Հայ բանաստեղծութեան իշխան»ը մահացած էր 1945-ին եւ այդ տարի իսկ սկսած էին անոր անունով միութիւն մը հիմնելու առաջին քայլերը, սակայն միութիւնը սկսած է գործել 1946-ին, իսկ Լիբանանի մէջ պետական պաշտօնական ճանաչում ստացած է 10 Մարտ 1947-ին: Պետք է վերջին թուականը նշուէր:



- Տպագրուած 22 բարեմադղանքներէն ընդամենը 4-ը հայերէն են, մնացեալները, այդ շարքին՝ Միութեան Հիմնադիր մարմնի ատենապետին ու անոր տիկնոջ բարեմադղանքը՝ անգլերէն: Արաբական երկիր, հայերէն ներկայացում, բացառապէս հայագի հանդիսատես եւ ... անգլերէն բարեմադղանքներ: Հայոց լեզուի գովքը հիւսած Թեքեանի անուան միութեան մը որեւէ ձեռնարկին մեր ոսկեղէնիկին նսեմացում/նուստացումը հայագի անձերու կողմէ՝ ՀԻՄՆՈՎԻՆ անընդունելի է:

- Տպագրուած 28 ծանուցումները կը պարգեն Նոյնպիսի պատկեր մը: Ծանուցողներուն գրեթէ բոլորը հայագի ըլլալով հանդերձ, կը տեսնենք արաբերէնախառն անգլերէն 1, ֆրանսերէնախառն անգլերէն 1, ֆրանսերէն 1, 25 անգլերէն ծանուցում եւ ՈՉ ՄԵՎ ԶԱՅՅԵՐԸ ԿԱՍ ԶԱՅՅԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾԱՆՈՒՅՈՒՄ: Ցասումս չափ ու սահման չունի ի տես այս երեւոյթին, որ վերածուած է համատարած հիւանդութեան՝ վարակելով Նոյնիսկ հայրենական ձեռնարկներու ծանուցումներն ու գովազդները: Հո՞ս պիտի հասնէինք, տիկնայք եւ պարոնայք թեքեանականներ, համազգայնականներ, նորսերնդականներ, ՀԲԸՄ-ականներ ու ՀԵԸ-ականներ (ներողութիւն՝ AGBU-ականներ ու AYA-ականներ) եւ միւսներ, դուք որ օրն ի բուն կը բարբաջէք ազգային արժէքներէ, հայապահպանումէ, «յուսահատութեան տեղի տալը մերժել»է, «մեր դիմադրութեան» (ընտրազրուամերը՝ գրքոյկի առաջին էջի գրութեանն են), ա՛յս է ձեր դիմադրութիւնը: Եթէ այս է, իրօք, ձեր դիմադրութիւնը, պետք է կրկնել Մովսէս Խորենացիի՝ շուրջ 1600 տարի առաջ պեղինակած ՈՂԲ-ը:

ՄԱՀԱԶԴ

Տեր եւ տիկին տոքթ. Տիգրան եւ Սիրուն Վարդապետեան եւ դստերը՝ Էլզա եւ Ռիթա Օրիորդ Մարալ Վարդապետեան Տիկին Թամար Վարդապետեան եւ դստերը՝

Էլտի եւ Էլլա-Մարիա Հանգուցեալ Ըորճ Վարդապետեանի ընտանիք Տիկին Սիրանոյշ Փօլատեան եւ զաւակուց Հանգուցեալ Ալիս Ճէրէճեանի ընտանիք Տեարք Չաքար եւ Չոհրապ Պալեան եւ ընտանիքներ եւ համայն Վարդապետեան, Պալեան, Խօշաֆեան, Կուաչիօ, Դարբինեան, Խորլարեան ընտանիքներ եւ ազգականներ սրտի դառն կսկիծով կը գուժեն իրենց հօր, մեծհօր, աներօր եւ հարազատին՝

ԳՐԻԳՈՐ Յ. ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻ (Ծնեալ 1938-ին)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 19 Յունիս 2026-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երկուշաբթի, 22 Յունիս 2026-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Հայ Կաթողիկէ Սուրբ Փրկիչ եկեղեցոյ մէջ, Պուրճ Համուտ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: Ցաւակցութիւնները կը շարունակուին ընդունուիլ երեքշաբթի, 23 Յունիսին, առաւօտեան ժամը 11:00-էն սկսեալ, մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Հ.Կ.Մ.-ի «ՆԻՐՎԱ ԵՒ ՎԱՐՈՒԺ ՆԵՐԿԻՉԵԱՆ» սրահին մէջ:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: aradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (ش.م.م.)